

ճիշտ գիծն է: Երբեք, ոչ մի բանում, ոչ մի քայլ չնա-
հանջել համապարտիական շահերից՝ ահա այն անսո-
սան սկզբունքը, որով ղեկավարվում են կոմունիստներն
իրենց շարքերի միասնության համար մղվող պայքա-
րում: Եվ եթե հաշվետու ժամանակաշրջանում նոր մեծ
հաջողություններ են ձեռք բերվել, ապա դա ամենից
ավելի լավ է վկայում, որ պարտիան, նրա Կենտրոնա-
կան Կոմիտեն լավ են պահպանել և ամրապնդել պար-
տիայի շարքերի միասնությունը: (Երկարառև ծափահա-
րություններ):

Գնահատելով անցած ուղու արդյունքները, կարե-
լի է վստահություն ասել, որ հաշվետու ժամանակա-
միջոցում պարտիայի Կենտրոնական Կոմիտեի կողմից
մեր երկրի քաղաքական ղեկավարումը գտնվել է պատ-
շաճ բարձրության վրա, որ պարտիան ճիշտ է լուծել
պետական ու պարտիական շինարարության հարցերը,
երկիրը հմտորեն տարել է լենինյան կուրսով:

Պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի գլխա-
վոր խնդիրն էր ապահովել սոցիալիստական Հայրենի-
քի տնտեսական հզորության հետագա ամրապնդումը,
էլ լավելի անառիկ դարձնել նրա սրբազան սահմաննե-
րը, էլ ավելի բարձրացնել սովետական մարդկանց
կյանքի նյութական և կուլտուրական մակարդակը:

Մեր Կոմունիստական պարտիան կառավարող
պարտիա է: Նրա ղեկավարումը, նրա տեղական կազ-
մակերպությունների գործունեությունից է վճռական
չափով կախված ամեն մի կարևոր դրոժի հաջողությու-
նը: Բնական է, որ երկրի առջև կանգնած խնդիրների
իրականացման համար, առաջին հերթին, անհրաժեշտ
էր մեծ աշխատանք կատարել պարտիական կազմա-
կերպությունների մոբիլիզացման ուղղությամբ, բոլոր
կոմունիստների մեջ զարգացնել թերությունների նկատ-
մամբ անհանդուրժողական օգին:

Պարտիայի և ամբողջ երկրի կյանքում բացառիկ
կարևոր դեր խաղացին հաշվետու ժամանակամիջոցում
ՍՄԿՊ Կենտկոմի պարբերաբար տեղի ունեցած Պլե-
նումները: Այդ Պլենումներում Կենտրոնական Կոմիտեն
ամբողջ պարտիայի, ամբողջ ժողովրդի առջև լենինյան
ուղղամտությամբ և սկզբունքայինությամբ բացահայ-
տեց գյուղատնտեսության ու արդյունաբերության զար-
գացման ասպարեզում եղած լուրջ թերությունները,
նշեց այդ թերությունների վերացման, երկրի ժողովրդ-
դական տնտեսության հետագա վերելքի, աշխատավոր-
ների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդա-
կի բարձրացման անհետաձգելի խնդիրների լուծման
ուղիները:

Քննադատության ենթարկելով տնտեսական շինա-
րարության բացերը, Կենտրոնական Կոմիտեն ելնում էր
նրանից, որ պարտիան չպետք է վախենա ժողովրդին ա-
սելու ճամարտությունը մեր առաջընթացի թերություննե-
րի ու դժվարությունների մասին: Ով վախենում է
սխալներն ու թուլությունները խոստովանելուց, նա ուն-
լլուցիտներ չէ: Հարկ չկա, որ մենք թաքցնենք մեր թերու-
թյունները, որովհետև մեր գլխավոր գիծը ճիշտ է, կո-
մունիստական շինարարության դրոժը աճում է ու հաղ-
թանակում, իսկ թերությունները այնքան ավելի քիչ կլի-
նեն, որքան մասսաները ավելի լայնորեն կներգրավվեն
այդ թերությունների դեմ մղվող պայքարում:

Կենտրոնական Կոմիտեն պարտիական կազմակեր-
պություններին կոչ արեց ամեն կերպ ծավալել քննադա-
տությունն ու ինքնաքննադատությունը, քննադատորեն
գնահատել կատարված աշխատանքի արդյունքները,
վճարաբար պայքարել ինքնադատաբանների, պարծենկո-
տության ու գոռոզամտության դեմ: Մեզանում շատ թե-
րություններ չէին լինի, որոնց դեմ մենք այժմ պայքա-
ր ենք մղում, եթե իր ժամանակին պարտիայի առանձին
օղակներում շտարածվելին ինքնահանգստացման տրա-
մադրությունները, գործերի իսկական դրությունը գունա-
զարդելու փորձերը: Սկզբունքային և անկեղծ քննադա-
տությունն ու ինքնաքննադատությունը պարտիայի հե-
տագա ամրապնդման, թերությունների շուտափույթ վե-
րացման, կոմունիստական շինարարության բոլոր բնա-

գավառներում նոր հաջողությունների ճամարտ ուղին է:
Պարտիայի միասնության հետագա ամրապնդումը և
պարտիական կազմակերպությունների ակտիվության
բարձրացումը պահանջում է ին վերահաստատել պար-
տիական կյանքի՝ Լենինի կողմից մշակված նորմաները,
որոնք առաջ հաճախ խախտվում էին:

Առաջնակարգ նշանակություն ունեցավ կոլեկտիվ
ղեկավարման լենինյան սկզբունքի վերականգնումը և
ամեն կերպ ամրապնդումը: ՍՄԿՊ Կենտրոնական Կոմի-
տեն աշխատել է օրինակ ցույց տալ այդ տեսակետից:
Բոլորի համար ակներև է, թե վերջին տարիներս որքան
է բարձրացել Կենտրոնական Կոմիտեի դերը՝ որպես մեր
պարտիայի կոլեկտիվ ղեկավարի: Կենտկոմի նախագա-
հությունը դարձել է պարբերաբար գործող կոլեկտիվ օր-
գան, որի տեսադաշտում են գտնվում պարտիայի և
երկրի կյանքի բոլոր առավել կարևոր հարցերը:

Պայքարելով կոմունիստների և բոլոր աշխատավոր-
ների ստեղծագործական ակտիվությունը ամեն կերպ
զարգացնելու համար, Կենտրոնական Կոմիտեն միջոց-
ներ ձեռնարկեց պատմության մեջ անհատի դերի մարք-
սիստական-լենինյան ըմբռնումը լայնորեն պարզաբա-
նելու համար: Կենտկոմը վճռաբար հանդես եկավ մարք-
սիզմ-լենինիզմի սղուն խորթ՝ անհատի պաշտամունքի
դեմ, որը այս կամ այն դրոժի ղին դարձնում է հրաշա-
գործ-հերոս և միաժամանակ նվազեցնում է պարտիայի
ու ժողովրդական մասսաների դերը, հանգեցնում է նը-
րանց ստեղծագործական ակտիվության թուլացմանը:
Անհատի պաշտամունքի տարածումը նսեմացնում էր
կոլեկտիվ ղեկավարման դերը պարտիայի մեջ և երբեմն
հանգեցնում էր մեր աշխատանքում լուրջ բացերի:

Մեր պարտիական հիմն ռենտերնացիոնալ-ում կան
այսպիսի խոսքեր. «Ոչ ոք չի տա մեր փրկությունը, ոչ
աստված, ոչ խենթ հերոսը, ոչ արքան. մենք պետք է մեր
ապատեությունը կռենք ձեռքով մեր սեփական...»: (Քուռն
ծափահարություններ): Այդ ոգեշունչ խոսքերը ճիշտ,
մարքսիստական արտացոլում են մասսաների ունյու-
ցիոն ստեղծարար դերը, կոլեկտիվի դերը: Մարքսիստա-
կան թերոհայով գինված պարտիայի կողմից ղեկավար-
վող ժողովուրդը, — ահա մեծ և անհաղթելի ուժը, նոր
կյանքի կերտողը, պատմության կերտողը: (Երկարառև
ծափահարություններ):

Պարտիական կյանքի լենինյան սկզբունքների իրա-
կանացումը հանգեցրեց պարտիական կազմակերպու-
թյունների քաղաքական ակտիվության բարձրացման,
աշխատավորների հետ կապերի ամրապնդման, մասսա-
ների վրա նրանց ազդեցության ուժեղացման: Դա էլ ա-
վելի բազմապատկեց պարտիական կազմակերպու-
թյունների ուժերը, անշափ բարձրացրեց նրանց մարտու-
նակությունը՝ տնտեսական և կուլտուրական շինարա-
րության խնդիրների լուծման գործում:

Եվ այսպես, մեր պարտիայի զարգացման տեսակե-
տից, հաշվետու ժամանակաշրջանը եղավ պարտիայի
միասնության հետագա ամրապնդման, նրա քաղաքա-
կան և կազմակերպական դերի ուժեղացման, մասսա-
ների վրա նրա ազդեցության աճման ժամանակաշրջան:
Պարտիան մշակեց ժողովրդական տնտեսության և աշ-
խատավորների բարեկեցության նոր վերելքի ծավալուն
ծրագիր, այդ ծրագրի իրագործման համար մոբիլիզաց-
րեց ամբողջ ժողովրդին և լուրջ հաջողությունների հա-
սավ կոմունիստական շինարարության բոլոր ճակատ-
ներում:

Ասկայն այժմ էլ, երբ մեր պարտիայի ուժն ու հե-
ղինակությունը աննախընթաց բարձրության են հասել,
չի կարելի անձնատուր լինել բարեհոգության և ինքնա-
հանգստացման: Հետագա հաջող առաջխաղացումը ա-
պահովելու համար պետք է բարձր մոբիլիզացիոն վի-
ճակում պահել մեր բոլոր պարտիական կազմակերպու-
թյունները, անդու կերպով բարելավել և կատարելա-
գործել մեր ամբողջ պարտիական աշխատանքը: Եվ, ա-
մենից առաջ, անհրաժեշտ է բարձրացնել պարտիայի
պարտիական-կազմակերպական և իդեոլոգիական աշ-
խատանքի մակարդակը:

2. ՊԱՐՏԻԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Իրենց ամբողջ կազմակերպական գործունեության
մեջ պարտիան և նրա Կենտրոնական Կոմիտեն նշում

պարտիական օրգանները որոշ չափով բարելավեցին ար-
դյունաբերական և գյուղատնտեսական արտադրության